ՀՀ Լոռու մարզի Սարչապետ համայնքի համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի բաց, դասական աճուրդի միջոցով օտարման վերաբերյալ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

2022թ. ապրիլի 07-ին ժամը 11^{30}-ին, ՀՀ Լոռու մարզի Սարչապետի համայնքապետարանի կողմից, ՀՀ Լոռու մարզի Սարչապետի համայնքապետարանում՝ 1-ին փողոց, թիվ 67 հասցեում կայանալու է համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի օտարում՝ բաց, դասական աճուրդի միջոցով:Աճուրդի է դրվում հետևյալ լոտը՝ **Լոտ 1.** ՀՀ Լոռու մարզի, Սարչապետ համայնքի,Գոգավան բնակավայրում գտնվող հողամասը, մակերեսը՝ 0.072585 հա ծածկագիր՝ 06-067-0107-0008, նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ այլ հողեր, օգտագործման նպատակը՝ բնակելի կառուցապատման համար: Օտարվող անշարժ գույքի մեկնարկային գինը՝ 268 400 (երկու հարյուր վաթսունութ հազար չորս հարյուր) ՀՀ դրամ է:

Հողամասի նկատմամբ սահմանափակումներ չկան, նրա օգտագործումը սերվիտուտ չի առաջացնում:
Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել.
ա/հայտ,
բ/ աճուրդին մասնակցության համար սահմանված դրամի չափով վճարի անդորրագիր,
գ/ անձնագիր, իրավաբանական անձանց համար՝ հիմնադիր փաստաթղթերը:

Հայտերն ընդունվում են յուրաքանչյուր երկուշաբթի և ուրբաթ օրերին՝ ժամը 09:00-18:00 ընկած ժամանակահատվածում, բացառությամբ 13:00-14:00 ընկած ժամանակահատվածի: Հայտերի ընդունման վերջնաժամկետն է 2022 թվականի ապրիլի 01-ը, ժամը 18:00-ն: Վաճառվելիք լոտին մասնակիցները կարող են ծանոթանալ մինչև աճուրդի բացման նախորդող օրը՝ յուրաքանչյուր երեքշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ օրերին՝ ժամը 10:00-17:00 ընկած ժամանակահատվածում, բացառությամբ 13:00-14:00 ընկած ժամանակահատվածի: Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը համարվում է աճուրդում հաղթած մասնակից:Նախավճարի չափը՝ մեկնարկային գնի 5 %-ի չափով, վճարվում է աճուրդի անցկացման օրը՝ կանխիկ, քայլի նվազագույն չափը մեկնարկային գնի 5 %-ի չափով, աճուրդի մասնակցության վճարը 1000 ՀՀ դրամ է:Աճուրդի կանոնակարգին մասնակիցները կարող են ծանոթանալ աճուրդի անցկացման վայրում: Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել Սարչապետի համայնքապետարան (077) 86-74-59 հեռախոսահամարով: